

# ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԸ ԱՍՏՅԷԼ ԵՆ HELP ԾՐԱԳՐԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐ

30.03.2018 13:55



Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը Եվրոպայի խորհրդի ներկայացուցիչ Տիգրան Կարապետյանի հետ համատեղ ավարտական հավաստագրեր է հանձնել 2017 թվականի աշնանը մեկնարկած «Ընտանեկան իրավունքը և մարդու իրավունքները: Երեխաների և մեծահասակների իրավունքների պաշտպանության միջազգային չափանիշները» ծրագրով վերապատրաստված փաստաբաններին:

Վերապատրաստումն իրականացվել է Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի, Ռուսաստանի Դաշնության փաստաբանների պալատի և Եվրոպայի խորհրդի HELP (Իրավունքի ոլորտի մասնագետների ուսուցում մարդու իրավունքների վերաբերյալ) ծրագրի հետ համագործակցության շրջանակներում: Դասընթացի նպատակն էր ընտանեկան իրավունքի վերաբերյալ ներպետական և միջազգային պրակտիկայի համատեղ քննարկումը, դերաբաշխման միջոցով ՀՀ և ՌԴ փաստաբաններին միևնույն խնդրահարույց դատական պրակտիկային անմիջական մասնակից դարձնելը և ուսումնական հարթակում երեխայի լավագույն շահի պաշտպանության համար ստեղծված մարզող դատախազին մասնակցելը:

Նախագծի իրագործումը հնարավոր է դարձել Փաստաբանական գործունեության հիմնարար սկզբունքների վերաբերյալ 2016թ. մայիսի 19-ին ստորագրված խարտիային հայկական և ռուսական փաստաբանության մասնակցության շնորհիվ:

Վերապատրաստման հեռավար դասընթացը զուգահեռաբար ընթանացել է նաև Ռուսաստանի Դաշնությունում և երկու երկրի 30 փաստաբան տեսակապի միջոցով իրական ժամանակահատվածում համատեղ իրավական վարժանքների են մասնակցել:

Միջոցառումն ընդամենը վերապալի խորհրդի HELP ծրագրի համակարգող Անաստասիա Շադարովան:











```
Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" &&
parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })
```